

ԿՐՕՆԱԿԱՆ

Ս. ՅՈՎՍԷՓ

Մաթթեոսի և Ղուկասոս Աւետարաններուն առաջին էջերը կը խօսին մեզի մարդու մը մասին, Նոյի նման ճարգար՝ մակդիրով բնորոշուած, որուն սակայն լուսանցքային սեղ մը վերապահուած է միայն հոգեւոր գրականութեան կամ Ս. Գրոց պատմութեան մէջ։ (Մեր խօսքը ի նկատի չունի բոլոր Բրիտանիական Եկեղեցիները)։ Ս. Յովսէփն է ան, խօսեցեալը Ս. Կոյսին, որուն մեր Եկեղեցին է միայն որ պատուած է «Աստուածահայր» աթոռոսով։ Կ'արժէ, Աւետարաններուն պարզած ակար լոյսին տակ (անոր մասին կցկուտը սեղեկութիւններ տրուած են հոն) խորհրդածութեան նիւթ ընել մեծ այս սուրբին կեանքն ու առաքինի վարքը։

Կու գար ան Դաւթի ցեղէն, որմէ, ըստ մարգարէական կանխատեսութեան, պիտի ծնէր Փրկիչը աշխարհի։ Հիւսն (աստղծագործ) էր ան արհեստով և իր բնականութիւնը հաստատած էր Դաւիթիոյ նահանգին սիրտը եղող Նազարէթ քաղաքին մէջ, որ հակառակ ատոր, կը թուի ոչ այնքան մեծ կամ նշանաւոր սեղ գրաւած ըլլալ Պաղեստինի այդ օրերու քաղաքներուն մէջ։

Աւանդութիւն մը կ'ընէ թէ Նախապէս ամուսնացած էր ան և հայր էր Յիման զաւակներու — Յակոբ, Յուդա և Շմաոն — (առաջինը՝ Տեսուհեղարը, զոր կաթուղիկ Եկեղեցին կ'ուզէ նոյնացնել Ալիքեան Յակոբոս առաքեալին՝ ինչպէս միւս երկուքը՝ Սիմէոն Նախանձայոյդ և Յուդա Յակոբեան — Հայաշխարհի առաջին լուսաւորիչներէն Թադէոսը — առաքեալներուն հետ) և աղջիկներու՝ օրոնց անունն

ները չեն տրուած մեզի Աւետարանի էջերէն։ Տիկնոջ մահէն ետք է որ նշանուած է նոյնացեղ պարճանուհի մը հետ — ահնկալիւի է տարիքի բաւական տարբերութիւն, ինչ որ խտուելի չէր այդ օրերուն — որ միմօր դուստրն էր Յովսէփի մայր և Աննայի, քարեպաշտ ամուլի մը՝ որ երկարատեւ սպասումէ և անձկայրեաց պաղատանքներէ ետք միայն կրցած էր արժանանալ Տիրոջ շնորհին, ծնողք ըլլալու անփոխարինելի երանութեան։

Ուրիշ աւանդութիւն մը կ'ընէ թէ երկար չեղաւ Յովսէփի աստեղոր կեանքը։ Եւ թէ Գրիգորոս 19 տարու էր երբ բաժնեւեցաւ ան իրեններէն ու աշխարհէն։

Կենսագրական սեղմ այս գիծերը ուկայն ոչինչով կը փոքրեն դերն ու գիրքը միծառաւատ այս սուրբին, որ աշխարհի Փրկիչին խնամակալն ու երկբաւոր ճայրը ըլլալու գերազանց պատիւին կ'արժանանար Տիրոջ ողորմութեամբ ու կարգադրութեամբ։

* *

Ս. Յովսէփ ամենէն աւելի պատուը ուած է կաթուղիկ Եկեղեցւոյ կողմէ։ Օրթոտոքս Եկեղեցին հազիւ կը յիշատակէ զայն, Նախահարց չարքին, Ս. Մնակեղ կանխող Կիրակի օրը, Բաղճաթիւ են Հռովմէական Եկեղեցւոյ մէջ վանքեր, մայրապետանոցներ, վարժարաններ, հիւանդանոցներ և այլ բարեկամական հաստատութիւններ, մեծ այս սուրբին անունը իրենց ճակտին հպարտօրէն կրող։ Անոր տօնը կը հանդիսաւորեն Մարտ ամսոյ 19ին։ Բաց աստի, կը յիշատակեն զայն նաեւ Մայիս ամսու առաջին օրը — որ շատ մը երկիրներու մէջ ճանչցուած է որպէս Համաշխարհային Բանուորականութեան Օր —, ճիւղաւոր Յովսէփի տօնը իբրեւ իսկ Կոյս Մարիամի, Հայր Յովսէփի և մանուկ Յիսուսի երրորդութեամբ կազմ

տարիներով միայն Բարեգործականի ցորենն է որ կ'աղան, առանց մտածելու Հաստատութեան մէջ թարմութիւն մտցնելու, օգտակար դառնալու համար մեր ոգեկան դիմագրական պայքարին։ Առայժմ այսքան։

(Շարունակելի՝ 4)

Ե.

Մըւած ՎՍուրբ Ընտանիքն ալ ունի իր տօնը տնոնց մօտ, տարւոյն վերջին կիւրակին (ընդմէջ Ծննդեան և Ամանորին)։
 - Իսկ մեր Եկեղեցւոյ մէջ, Հայր Յովսէփի տօնը կը կատարուի ինչպէս որոշուած շաբաթը վեցերորդ եօթնեակի Բշ. օրը։ Քիչ մը տարօրինակ է որ նոյն օրը տօնելի Ղուկիանոս հարկարապետը յիշատակուի իրմէ առաջ։ Չունինք իր անունով կառուցուած որեւէ աղօթատուն կամ իր վարքը փառագող որեւէ շարական։ Սակայն հակառակ այս բոլորին, իր գերեզմանը, զոր ցոյց կը տրուի Գեթսեմանիի ձորին մէջ, քարէնկէց մը միայն հետու Ս. Կոյսի գերեզմանէն, զարեւելի վեր հայկակոթ սեփականութիւն է, և սուր ունինք խորան մը, որուն վրայ տարուան շնորհքին երկիցս — իր տօնի օրը և Յովակիմայ և Աննայի տօնին — կը մատուցանենք Ս. Պատարագ։

Հայր Յովսէփի կեանքին մէջ ուշադրութեամբ պարագաներ են. —

1) Իր բերնէն ելած ոչ մէկ խօսք ուղղակիօրէն արձանագրուած է Աւետարաններուն մէջ։

2) Երբ իրազեկ ճիշդ լայ իր նշանածին յղութեան վիճակի մէջ գտնուելուն, կը մտադրէ արձակել զայն։ Քաւ լիցի սակայն այս պարագան վերագրել Ս. Կոյսի հաւատարմութեան մասին անուշուշտ կասկածի մը։ Այս մտածումին տուն տուող պատճառը իր համեմատութիւնն է, ինքզինքը անարժան նկատելու նոյն յարկին տակ բնակիլ կիներուն մէջ ճամէնօրհնեալին հետ։ Յովսէփի ներաշխարհը ալեկոծող այդ օրերու զգայնութիւնները, բարկ ու խռովիչ, կրօնաբարոյական վիպակի մը նիւթ կրնան հայթայթել։

3) Հրեշտակի տեսիլքին մէջ իրեն է որ կը տրուի հրահանգը Մարիամի ու Մանուկը տունելու և Եգիպտոս փախչելու Հերովդէսի երեսէն։ Եւ այս, հակառակ որ Տիրամօր օտաջած շնորհը անհամեմատօրէն բարձր էր իր ընդունածէն։ Բայց այսու ամենայնիւ ինքն էր, իրեւ այր մարդ, պետը ընտանիքին, և ընտանեկան կեանքի բնական կառուցուածքը պէտք է

պահուէր ու յարգուէր, անկասարար շնորհաց վիճակէն։

Երբ կը խօսինք Վսուրբ ընտանիքի մասին, մեր միտքը անմիջօրէն և բնականօրէն կ'երթայ արդի մարդկային ընկերութիւնը կազմող — և մասնաւորաբար Քրիստոնեայ — ընտանիքներուն։ Ի՞նչ վիճակ կը պարզեն անոնք բարոյագէտ, Հանգիստութիւն մը, Թէկուզ փոքր ու անշան, կոյ մարդեօք անոնց և Սուրբ Ընտանիքին միջև, Այսօրուան ծնողքները ունի՞ն պաթոսայնաւորութեան յրիւ գիտակցութիւնը, Տիրոջ պարզեւ նկատելու իրենց զաւակները և ըստ այնմ դաստիարակելու զանոնք Անոր սիրովն ու վախով միաժամանակ։ (Սիրոյն ու վախին հանգիստութեան մասին խօսիլ մտադրած ենք յառաջիկային, ժխտելու համար վարկածը զանոնք իրերամերժ իսկութիւններ իբրեւ ընդունող)։ Կ'անդադառնա՞ն արդեօք Թէ ընտանիքն է հիմը ընկերութեան և Թէ անոր քայքայուէն է որ կը սկսի քայքայուիլ համայնքին կամ ցեղին։ Իրենց սիրով, համբարշխութեամբ ու համագործակցութեամբ բարի օրինակ կը հանգիստանա՞ն կեանքի չարանենգ խղիւրդուն դեռ չբացուած կոկոն հոգիներուն, տանելու համար զանոնք իրենց բարեք աճուածին ու ծաղկուածին։ Այս հարցումներուն տրուած պատասխաններէն միայն կ'ախտուէ ունի ապագայ մարդկութեան ճակատագիրը։ Աշխարհ դէպի քայքայուած ու կործանուած կ'երթայ Թէ ոչ կանաչ օրեր կը սպասեն մեր մոլորակին։ Այդպիսիներու ընթացքէն ու կեցուածքէն կ'ախտուէ ունի պատասխանը։

ԳԵՈՐԳ Ս. ԺԻՆՎԻՉԵԱՆ

